

## ՔՈՒԵՅԹՑԻ ՆԱԽԱՐԱՐ.«ՇՈՒՏՈՎ ՊԻՏԻ ԼՍԷՔ ՈՒՐԱԽ ԼՈՒՐ ՄԸ»

Քուէյթի ներքին գործերու նախարար շէյխ Ֆահիլը Եուսէֆ Սաուտ Ալ Սուպահի աստեղ, թէ «լիբանանցիները շուտով դրական լուր պիտի լսեն իրենց նախագահէն, ոչ թէ ինծմէ»։ Զանապետութեան երեք պետերուն հետ ունեցած տեսակցու-



թիւներէն ետք, քուէյթի նախարարը վերահաստատեց իր երկրին աջակցութիւնը Լիբանանին ու եղբայրական այլ պետութիւններուն։ «Քուէյթեան բարգաւաճումի հիմնադրամէն պատրաստ ենք զուարմներ յատկացնելու եւ վարչապետ Նաուաֆ Սալամ խոստացաւ փոխանցել Լիբանանի անհրաժեշտ կարիքները», ըսաւ նախարարը։

### ՅԱՆՁՆԱՊՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ

Զանապետութեան նախագահ ժողէֆ Աուս վերահաստատեց կառավարութեան յանձնառութիւնը Լիբանանի հողային ամբողջականութեան, յիշեցնելով թէ այդ մասին հաստատուած է Սահմանադրութեան մէջ եւ կը պաշտպանուի լիբանանեան բանակին ջանքերով ու ժողովուրդին կամքով։ Պաապտայի պալատին մէջ լիբանանցի տնտեսական գործիչներու պատուիրակութիւն մը ընդունած ատեն Աուս ըսաւ. «Նախագահ ընտրուելէ ետք տուած երդումիս մէջ վերահաստատեցի յանձնառութիւնս Լիբանանի անկախութեան եւ հողային ամբողջականութեան։ Կը սխալի ան որ կը խորհի, թէ Լիբանանի պաշտպանութեան համար երկու անգամ երդում կատարած անձը կրնայ ինչ որ պատճառով դժուր իր խոստումը կամ ընդունիլ Լիբանանի շահերուն հակասող առաջարկ»։

### ՊԱՋԱՆՁԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՆԱՅԱՆՁ

Արտաքին գործերու նախարար Եուսէֆ Ռաժժի Պրիքսէլի մէջ տեսակցեցաւ Եւրոմիութեան յանձնակատարի տեղակալ Քայա Քլասի հետ՝ քննարկելու Եւրոմիութիւն-Լիբանան յարաբերութիւնները, շրջանային զարգացումները եւ կառավարութեան ծրագրերուն աջակցելու միջոցները։ Ռաժժի կեդրոնացաւ մանաւանդ սուրիացի տեղահանուածներու տունդարձին եւ ԵՈՒՆԻՖԵԼ-ի խաղաղապահ ուժերուն դերակատարութեան վրայ, պահանջելով ճնշում բանեցնել, որ Իսրայէլ քաշուի լիբանանեան բռնագրաւեալ բլուրներէն։

### ՀԱՐԱՄԱՅԻՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ

Հարաւի սահմանագիծին վրայ, իսրայէլեան ուժերը իրենց սահմանային դիրքերէն կրակ բացին լիբանանեան մերձակայ Շըլպա եւ Մարքապա գիւղերուն ուղղութեամբ, ուր հրդեհ բռնկեցաւ անտառներուն մէջ։

### ԱՊԱՅՈՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, թէ Դետախուզական ծառայութենէն ջոկատ մը երկու բնակարան խուզարկած է Թրիփոլի եւ Պրիթլի մէջ, ուր ձերբակալած է ապօրինի հրաձգութեան համար հետապնդուած երկու քաղաքացի։ Զոյգ բնակարաններէն գրաւուած է զէնք, զինամթերք, թմրանիւթ, կեղծ դրամ եւ ապօրինի այլ սարքեր, որ փոխանցած են հետաքննիչներուն։ Իսկ ժպէլ



գաւառի Դալաթ շրջանին մէջ բանակը ձերբակալած է Լիբանանի մէջ ապօրինաբար գտնուող 64 սուրիացի։ Բանակը այլ հաղորդագրութեամբ մը յայտարարեց Պեքաայի հիւսիսային եամնունէ գիւղին մէջ թմրանիւթի արտադրութեան մեծագոյն գործարաններէն մէկը խուզարկելու, սարքերը կործանելու եւ զանազան տեսակի մեծաքանակ թմրանիւթերու պահեստ մը առգրաւելու մասին։ Այս յատուկ գործողութեան ընթացքին յայտնաբերուած է նաեւ 300 մեթր երկարող գետնափոր ուղի մը, որ կը գործածուէր որպէս գործարանի ապահով մուտք ու ելք, ինչպէս նաեւ մթերանոց։ Բանակը գործանած է գետնափոր ուղին։

## ԹՐԱՄՓԻ ՇԵՐԹԱԿԱՆ ՄՏԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Փոխելով ռուս-ուքրանական պատերազմէն այսուհետեւ հեռու մնալու իր նախկին որոշումը, Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամի յայտնեց յաւելեալ ծանր զէնքեր Ուքրանիա ուղարկելու որոշումին մասին, շեշտելով համդերձ, թէ Ուաշինկթըն պիտի չվճարէ անոնց զինը։ Ըստ ամերիկեան



լրատումիջոցներուն, նախագահը որոշած է «Փաթիլը» տիպի հակաօդային պաշտպանութեան համակարգեր ուղարկել Ուքրանիա, անոր օդը պաշտպանելու ռուսական օդանւերէն, անօդաչու սարքերէն եւ հրթիռներէն։ ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղար Մարք Ռոթի հետ տեսակցութեան ընթացքին, Թրամի մեծ վրդովմունք յայտնեց Ռուսիոյ նկատմամբ եւ ըսաւ, որ հիասթափուած է իր պաշտօնակից Վլադիմիր Փութինէն, մինչ Ռոթ կարեւորեց ամերիկեան մատակարարումները։ Թրամի յայտնեց նաեւ, թէ 50 օրուան ընթացքին շատ ծանր պատժամիջոցներ պիտի սահմանէ Մոսկուայի նկատմամբ, եթէ Ռուսիա զինադադար չկնքէ Ուքրանիոյ հետ։

## ԴԵՌ ԿԸ ՇՆՉԷ ՀԱԼԷՊԸ (7) ԱՆԹԻԼԻԱՍԷՆ ՀԱԼԷՊ՝ ՀԱՒԱՏՔ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

ՆԱԶՕ ԵՐԵՒԵԱՆ

Անթիլիասէն հիւսիսային Լիբանանի Արիտայի սահմանը 100 քիլոմետր է։ Ուսմնէ ինքնաշարժին պատուհանէն լիբանանցի սահմանապահ ոստիկանին տուաւ առաջին ողջոյնը՝ «նաաթիք ըլ աաֆիէ»։ Առաւօտեան 7-էն քիչ անց էր։ Մուտք ու ելքի նոր սահմանուած ժամը։



Օրը Ուրբաթ էր՝ անոնց «Կիրակին»։ Խնդրումը տանելի էր։ Սահմանի պաշտօնեաները տնտնացող գրոյցի մէջ էին սուրճի փողը խաւաքարտէ գաւաթներով։ Վարորդս՝ Ուսմնէն ճարպիկօրէն գտաւ ելքը։ Անցագրերու ստուգման սպասարկութիւնը հին օրերէն աւելի անկանոն դարձած քորոնայի շրջանին տարածուած գտած ընկերային հեռաւորութեան (social distance) անհրաժեշտութեան պահանջը կը զգացնէր։ Զովացնող օդափոխիչները անշնչացած էին ելեկտրականութեան կարօտէն, ծխախոտի ծուխ եւ մարդոց հրմշտուք։

Առաջ այսպէս չէր Լիբանանի սահմանը։ Սահմանակից «քրոջ»մէն աւելի հանդարտ, կարգ ու կանոնով, սրահը զովացուած էր։

Երկու սահմանները յստակօրէն բաժնող Նահր էլ Քապիր գետին կամուրջը ամիսներ առաջ քանդուած էր իսրայէլեան օդուժին կողմէ։ Երկար ատենէ փակ մնալէ ետք այժմ վերաբացուած էր եւ մենք «վերանորոգուած» քարքարոտ այդ կարճ միջոցը դանդաղօրէն կտրելով մուտք գործեցինք իշխանապետութեան Սուրիա։

(Շարունակութիւնը տեսնել էջ 4)

## ՊԻԹԲՈՅՆԻ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ

Պիթքոյն (Bitcoin) թուային դրամանիշին փոխարժեքը անցնող օրերուն նուաճեց հերթական մրցանիշը եւ հասաւ 122 հազար տոլարի։ Այս յաջողութեան լոյսին տակ, զգալի աճ գրանցեցին նաեւ այս դրամանիշին հետ առնչուած շարք մը ընկերութիւններ։ Նշենք, որ ամերիկեան գոնկրէյը այս օրերուն կը քննարկէ թուային դրամանիշերուն նպաստաւոր երեք օրինագիծ, որոնց վաւերացումը կրնայ յաւելեալ թափ տալ պիթքոյնին եւ ընկերներուն։

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ ԼԱԹԱՔԻԱՅԷՆ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, թէ օդուժին ուղղաթիռները ապահով վերադարձած են հիւսիսային Քէլյաաթի օդային խարխիւս, մասնակցելէ ետք Սուրիոյ Լաթաքիա գաւառի անտառային շրջաններուն մէջ անցնող օրերուն բռնկած մեծ հրդեհները մարելու աշխատանքին։ Ըստ բանակի յայտարարութեան, լիբանանեան ուղղաթիռները բոցերուն դէմ պայքարած են 7-13 Յուլիսին, երբ կարելի եղած է կանխել բոցերուն տարա-



ծումը եւ վերջնականապէս մարել հրդեհին բոլոր օճախները։ Սուրիական օդուժին հրամանատարը ընդունած է այս գործողութեան մասնակցած լիբանանեան օդուժի սպաները, գնահատած անոնց նուիրուած ծառայութիւնը եւ դրուատած հրդեհին դէմ պայքարած զանազան կողմերուն միջեւ համադրումն ու համագործակցութիւնը։ Յիշեցնենք, որ Լաթաքիոյ շրջանին մէջ բռնկած հրդեհները անցեալ շաբաթ մօտեցած էին նաեւ Քեսապին ու անոր հայաշատ գիւղերուն։

### ՄԻՋԱՂԵՐ ՍՈՒԷՅՏԵՒ ՄԷՋ


Սուրիոյ Ներքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ հարաւային Սուլթէ գաւառին մէջ զինեալ խմբաւորումներու միջեւ մարտերուն հետեւանքով մահացած է 30 հոգի, վիրաւորուած՝ 100։ Ըստ նախարարութեան, ներքին ապահովութեան ուժերը եւ Պաշտպանութեան նախարարութեան զինուորները սկսած են մուտք գործել Սուլթէ՝ հանդարտեցնելու համար վիճակը եւ ապահով գօտի տրամադրելու քաղաքացիներուն։ Նախարարութիւնը վստահեցուց, թէ պիտի ապագինէ ապօրինի խմբաւորումները եւ վերահաստատէ շրջանին կայունութիւնը։ Միջադէպը սկսած էր Դամասկոս-Սուլթէ մայրուղիին վրայ վաճառականի մը թալանումով, որուն յաջորդած էին փոխադարձ առեւանգումներ եւ վերջա-

Շարունակութիւնը տեսնել էջ 2

## ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԿԸ ՎԵՐԱԳՐԵՑՆԷ ՀԱԼԷՊԻ ՆՈՐ ԳԻՒՂԸ - 1

Նոր Գիւղը Դալէպի ամենէն հայախիտ ու հայաիծ թաղամասն էր։

Անցեալ ժամանակով խօսեցանք, «թաղամասն էր» ըսիմք, որովհետեւ այսօր այդպէս չէ, երբեք։ Դալէպի հնգամեայ արհմալի պատերազմն ու անոր հետեւանքով



ծայր տուած գաղթի ալիքը լայն չափով դատարկեցին Նոր Գիւղը իր բնիկ հայ տարրէն, ամայացուցին անոր հայաբնակ փողոցներն ու շէնքերը, փոխեցին շրջանին ժողովրդագրական պատկերը ու պատմութեան գիրկը նետեցին համեստ ու բարեկեցիկ ընտանիքներու համար «փոքրիկ Դայաստան» մը նկատուած ըլլալու անոր վաղեմի համբաւը...։

Սփիւռքեան տխր՝ւոր ու կրկնուող պատմութիւն։

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)



# ԴԷՊԻ ԱՐԵՒՄՈՒՏՔ ՆԱՅՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտին ետք եւ գրեթէ ամբողջ կէս դար (1945–1995), Ամերիկայի եւ Սովեւտական միութեան միջեւ մղուած Պաղ պատերազմը ծնունդ տուաւ ժողովրդային ազատագրական շարժումներու, որոնք ընդհանրապէս կը մղուէին Արեւմուտքի կամ Ամերիկայի եւ անոր արբանեակ երկիրներուն դէմ։ Ափրիկէի մէջ գաղութատիրութենէ կ'ազատագրուէին երկիրներ մէկը միւսին ետեւէն, Ամերիկայի ծոցին մէջ նստած Քուպան կը համարծակէր մատ բարձրացնել իր հզօր դրացիին դէմ, Եգիպտոսի Նասէրն ալ դարձած էր Արեւմուտքի աչքի փուշը։



Անցեալ դարու եօթանասունական թուականներուն, վերոյիշեալ ազգային ազատագրական շարժումներն ցերշնչուած, աշխարհի տարբեր վայրերու մէջ կազմաւորուեցան ոմանց կողմէ ազատագրական, ուրիշներու կողմէ ալ ահաբեկչական կոչուող խմբաւորումներ։ Դէպի ծախ բեցող գաղափարապաշտ խմբաւորումներ էին անոնք, ինչպէս Պաղեստինի ազատագրութեան ժողովրդային ճակատը (PFLP), Արեւմտեան Գերմանիոյ Կարմիր բանակ հատուածը (West German Red Army Faction) (RAF), Իտալիոյ Կարմիր ջոկատները (RB), ճափոնի Կարմիր բանակը (Japanese Red Army), Հայաստանի ազատագրութեան գաղտնի բանակը (ASALA) եւ այլն։ Լատին Ամերիկայի, Կեդրոնական Ամերիկայի եւ Ասիոյ տարբեր շրջաններու մէջ ալ գտնուեցան նման ահաբեկչական ազգային ազատագրական խմբակներ։

Սովետական միութեան անկումէն ետք (1991), ծախակողմեաններու գաղափարախօսութիւնը մարեցաւ՝ տեղի տալով կրօնապաշտութեամբ շարժող ուժերու, ինչպէս Աֆղանիստանի Թալիպանները, Նիկերիոյ Պոքո հարամը, Սոմալիոյ ալ-Շապապը, Եմենի Հութիները, Լիբանանի Հըզպալլան եւ Պաղեստինի Համասը։

Մեզ հետաքրքրող բաժինը կը վերաբերի այս կրօնապաշտ խմբաւորումներուն՝ Դիմադրութեան ճակատ (Resistance Front) եւ արաբերէնով ժապիաթ ալ-Սուքաուամա կոչուող ուժերուն, որոնք վերջին տասնամեակներուն, Իրանի առաջնորդութեամբ, ճակատ կազմած էին Իսրայէլի դէմ։ Իրան-Իրաք-Սուրիա-Հըզպալլա-Հութի-Համաս քաղաքական միաւորումը (entente) տեսակ մը իսլամ շիի համայնքներու (առաւել սիւննի Համասի) դաշնակցութիւն էր, որ Պաղեստինեան դատի պաշտպանութեան համար Արեւմուտքի դէմ պայքարելու դրօշակ պարգած էր։ Ասոնցմէ անկախ՝ կար նաեւ Տաիէշը, սիւննի ծայրայեղականներու շարժումը, որ իսլամական պետութիւն մը հիմնելու հեռանկարով սարսափ ստեղծեց Իրաքի եւ Սուրիոյ մէջ։ Տաիէշը Սուրիոյ մէջ ծունկի բերուեցաւ Պաշշար Ասատի դաշնակից Ռուսիոյ, ինչպէս նաեւ Ամերիկայի եւ անոր դաշնակից ուժերուն կողմէ, մեծամասնութեամբ կազմուած Իրաքի եւ Սուրիոյ քիւրտերէն։ Եւ յարմար առիթի կը սպասուէր, որ վերջ դրուէր նաեւ շիիներէ բաղկացած կրօնապաշտութեան տոգորուած Դիմադրութեան ճակատին։

Պաղեստինեան Համաս կոչուող ծայրայեղ իսլամական շարժումը տուաւ այդ առիթը։

2023 թուականի Հոկտեմբեր 7-ին Կազայի Համասին կողմէ Իսրայէլի դէմ կատարուած ահաբեկչական գործողութենէն ետք, Իսրայէլի հզօր օդային ուժը, իր հետ ունենալով Արեւմուտքի նեցուկն ու օրինութիւնը, ծրագրեց վերջ տալ Դիմադրութեան ճակատին եւ իրար ետեւէ ինկան բերդերը Համասի, Հըզպալլայի, Սուրիոյ, եւ նոյն ճակատագիրը ունենալու վիճակին ենթարկուեցան Եմենի Հութիները եւ Իրանի մոլլաները։

Անցեալին գործող եւ այժմ մարած ծախակողմեան գաղափարապաշտ շարժումները թշնամական կեցուածք որդեգրած էին Իսրայէլի դէմ՝ զայն նկատելով Արեւմուտքի միջնաբերդը Միջին Արեւելքի մէջ։ Սովետական միութեան անկումով ինկան նաեւ իրենք։ Սովետական միութեան եւ համայնավարութեան դէմ Ամերիկայի պայքարին մէջ զինուորագրուեցան կրօնապաշտները, ինչպէս Թալիպաններն ու Իխուան Մուսլիմները եւ Պըն Լատենները։ Արեւմուտքին կողմէ մէջտեղ բերուած եւ ստեղծուած կրօնապաշտ իսլամ Ֆրանքլընշթայն-հրէշը դարձաւ զինք ծնող գիտնականին Նեմեսիսը։

20-րդ դարը եղաւ ազգային ազատագրական պայքարներու եւ ծայրայեղ գաղափարապաշտութեան դրսեւորման ժամանակաշրջանը։ Վերջ դրուեցաւ այդ տեսակ գաղափարապաշտութեան։ 1982-ին, Պէրուի մէջ ամերիկեան եւ ֆրանսական «խաղաղապահ» զինուորներու դէմ եղած ահաբեկչութիւնը սկիզբը դրաւ իսլամ գաղափարապաշտներու կողմէ Արեւմուտքի դէմ սկսած պայքարին, եւ 21-րդ դարը սկսաւ 2001 թուականին Ուսամա Պըն Լատենի կողմէ ծրագրուած ահաբեկչութեամբ, որ իսլամ կրօնապաշտութեան հարուածը հասցուց մինչեւ Ամերիկայի ծոցը։

Ու 2001 թուականի Սեպտեմբեր 11-էն ետք Ամերիկան եւ Արեւմուտքը անդրադարձան, որ համայնավարութեան չափ ալ վնասաբեր է իրենց համար իսլամ կրօնապաշտութիւնը։ Այդ պատճառաւ Իսրայէլի «հացին իւղ քսուեցաւ»։ Առաջին հերթին Արեւմուտքի դէմ ամէն տեսակ յոխորտանքի տեր ոչ-կրօնապաշտ իշխանութիւններ, ինչպէս Իրաքի Սատտան Հիւսէյնը եւ Լիպիոյ Մուամմար Քազգաֆին (Իսրայէլի երդուեալ թշնամիները), կաշուեյարդարի ենթարկուեցան եւ վայրագօրէն մէջտեղէն հանուեցան։ Մնաց Դիմադրութեան ճակատը՝ Իրանի գլխաւորութեամբ։ Իսրայէլի վարչապետ Նեթանիահոււ երկու տասնամեակներէ ի վեր Ամերիկային եւ Արեւմուտքին զլուխը կը ցուցնէր կամ «կ'արդուէր»՝ պահանջելով ամոնք բացարձակ նեցուկը, որպէսզի վերջ դրուէր Դիմադրութեան ճակատին։ Իրաքի Սատտան Հիւսէյնը հարուածելու եւ տապալելու համար զրպարտութեամբ պատճառաբանուեցաւ փճացնել Իրաքի մասսայական ոչնչացման զենքերը (weapons of mass destruction)։ Այժմ վարչապետ Նեթանիահոււ նորէն Իրանը

## ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԽԹԵԱՆ

հարուածելու համար զրպարտութեամբ կը պատճառաբանէ վերջ տալ անոր հիւլէական ռումբ ունենալու վտանգին։ Ամերիկայի մէջ նախագահ Թրամփի պէս մէկու մը ներկայութիւնը ոսկի առիթ էր Նեթանիահոււին՝ իր զրպարտութիւնը ծախելու Ամերիկային եւ անոր շուրջ դարձող աշխարհին։

Գաղափարախօսութեամբ մղուող կամ գաղափարապաշտութեամբ շարժող ուժերու դէմ կարելի չէ յաղթանակ արծանագրել, որքան ալ ծանր ու ցաւալի ըլլայ հարուածը անոնց դէմ։ Անոնք գուրկ կ'ըլլան իրապաշտութենէ եւ պարտութեան մէջ իսկ կ'ուզեն գտնել պատճառ մը,– որքան ալ ծիծաղելի թուի,– որպէսզի ստեղծեն կարելիութիւնը ապագային չարաչար գործածելու կուրօրէն իրենց հետեւող շարքերը։

Այս բոլորէն դաս քաղելով մարդ կը մղուի համոզուելու, որ Արեւմուտքի շահերուն դէմ կանգնող որեւէ ուժ վիճակուած է ուշ կամ կանուխ,– ըլլայ ան գաղափարապաշտութեամբ կամ կրօնապաշտութեամբ տոգորուած,– մարելու կամ անհետանալու։ Նոյնիսկ Ռուսիոյ պէս հսկայ մը քանի մը տարիէ ի վեր Ուքրանիոյ դէմ իր շղթայագերծած պատերազմէն չկրցաւ յաղթական դուրս գալ, որովհետեւ Ուքրանիոյ կողքին Արեւմուտքը գտաւ իր դէմ։

Սա դառն իրականութիւն է, որ մեզմէ ոմանք տարբեր պատճառներով չեն կրնար կամ չեն ուզեր հասկնալ եւ ընդունիլ։

Հայաստանի ներկայ իշխանութիւնը հասկցած ըլլալ կը թուի այս դառն իրականութիւնը եւ քացուած է դէպի Արեւմուտք ապահովելու համար իր ժողովուրդին անվտանգութիւնը, հակառակ իր հիւսիսի դրացի կասկածելի դաշնակից «հզօր» երկրին կողմէ եղած սպառնալիքներուն։

Ահաբեկչութիւնը նպատակի մը ծառայող միջոց է, իսկ բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ ծախողած է եւ խանգարած մարդկութեան հանգիստը։

Հայաստանի ԱՆՑԵԱԼԻ ուժերը կը սպառնային ԱՆՑԵԱԼԻ միջոց նկատուող ահաբեկչութիւնը կիրարկելով Ռուսիոյ փէշին տակ դնել հայրենի իշխանութիւնը. այն Ռուսիոյ, որուն վստահելով շատ բան կորսնցուցինք մեր ազգային արժանապատուութենէն եւ իողային հարստութենէն։

Արդեօք ե՞րբ պիտի անդրադառնան ոմանք, որ փորձուածը նորէն փորձելը յիմարութիւն է։

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ ԼԱԹԱՔԻԱՅԷՆ

### Շարունակուած էջ 1-էն

պէս զինեալ բախումներ։ Գաւառապետն ալ կոչ ուղղեց հանդարտութեան, վստահեցնելով թէ պետութիւնը պիտի պաշտպանէ քաղաքացիները։

Մարդկային իրաւունքներու սուրիական դիտարանը իր կարգին յայտարարեց, թէ Սուլէյմանի բախումներուն ընթացքին մահացած է 8 մարդ՝ ներառեալ 6 տիւրզի զինեալ եւ երկու պետելի։ Իսկ իշխանութեան ընդդիմացող տիւրզի ղեկավարները պահանջեցին միջազգային պաշտպանութիւն, մերժելով կառավարութեան զինուորական մուտքը Սուլէյման։

Ընկերվար յառաջդիմական կուսակցութիւնը հաղորդագրութեամբ մը ցաւ յայտնեց արիւնալի միջադէպերուն համար եւ կոչ ուղղեց Սուլէյմանի մէջ անյապաղ յանգելու խաղաղ լուծումի, քննադատելով արտերկրեայ ուժերէն միջազգային պաշտպանութիւն պահանջող բոլոր կոչերը։

## ՍՈՒՐԻԱ ԱՏՐՊԵՅԱՆԱԿԱՆ ԿԱՁ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ

Սուրիոյ նախագահ Անժատ Շարաա պաշտօնական առաջին այցելութիւնը տուաւ Պաքու, ուր տեսակցեցաւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ։ Շարաա յայտնեց, թէ Սուրիոյ նախկին վարչակարգը վնասած էր Ատրպէյճանին եւ այլ երկիրներու հետ Դամասկոսի յարաբերութիւններուն, սակայն



Սուրիա այժմ պատրաստակամութիւն ունի համագործակցելու Պաքուի հետ՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, մարդասիրական եւ այլ ոլորտներու մէջ։ Ալիեւ իր կարգին նշեց, թէ երկկողմանի յարաբերութիւնները այժմ արագօրէն կը զարգանան, կարելորելով ուժանիւթային համագործակցութիւնը, նկատի առնելով այս ոլորտին մէջ Սուրիոյ դիմագրաւած մարտերակրները։ Ձոյգ պատուիրակութիւններուն միջեւ տեղի ունեցած բանակցութիւններուն արդիւնքով ստորագրուեցաւ ատրպէյճանական կազմ թուրքիոյ վրայով Սուրիա փոխադրելու մասին յուշագիր, որ կը ներառէ նաեւ սուրիական մէջ ուժանիւթային հաւանական պաշարներու որոնում։ Իսկ «Ֆրանս փրէս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ, սուրիական պատուիրակութեան այցելութեան ծիրին մէջ, Պաքուի մէջ տեղի ունեցած է նաեւ սուրիացի պատասխանատուի մը հանդիպումը իսրայէլացի պաշտօնակցի հետ, առանց հրապարակելու անոնց ինքնութիւնը։

## ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԿԸ ՎԵՐԱԳՐԵՑՆԷ

### (Շարունակուած էջ 1-էն)

Նոր Գիւղի մէջ սակաւաթիւ հայեր մնացին, այո՛, սակայն մեր ազգային-եկեղեցական կառոյցներէն շատեր դեռ հոն են։ Հոն է Քարէն Եփիէ Ազգ. Շեմարանը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Տիգրանեան ընտանեկան պարտեզը (ամռան եղանակին), Սուրիահայ Օգոմբեան Խաչի ընկերաբժշկական կեդրոնը, Ազգ. Պատապարանը, Գերմանիկ-Վասպուրական մշակութային միութեան շէնքը, Հայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն եկեղեցին ու անոր կից Ջուարթնոց վարժարանը, Ջէթունի հայրենակցական միութեան շէնքն ու սրահը, Համազգայինի կեդրոնատեղին (նախկին Սահակեան վրժ.)՝ Հայագիտական հիմնարկով հանդերձ, Վերժին Կիւլպեմեան նախկին մայրամոցը (այժմ՝ Հայ Ծերանոց) եւ...եւ... հոն են մարդոց յիշատակները։ Անցնջելի՜ յիշատակները։

Վերջին տարիներուն շատե՛ր քրքրեցին իրենց հալէպեան յուշերու «տոպարակ»-ը։ Գաղթեր էին Հալէպէն ու իրենց ետին ձգեր մանկութիւն, երիտասարդութիւն ու ատոնց կապուած անմոռանալի ինչ-ինչ յուշեր։ Հիմա կ'ուզէին պատմել, խօսիլ այդ մասին, իրենց կոկորդին բովանդակ ուժով պոռալ՝ թէ «Հալէպը անփոխարինելի էր»...։ Կը գրէին յօդուածի ծեւով (ինչպէս՝ ամերիկաբնակ Արա Մխսեանի ուշագրաւ յուշերը), երբեմն ալ կը հրատարակէին գիրքեր։ Ձորօրինակ, լոս-անճելըսաբնակ Գեորգ Պետիկեանի «**Քարն, Հալէպ**» (2007) եւ «**Սա մեր բոլորին Հալէպն է**» (2017) ժողովածուները, նիւ-եորբաբնակ Ջարմինէ Պօղոսեանի «**Ազգէն Ամերիկա**»-ն (2021), գուիցեաբնակ Մաթիկ Եպիղաթեանի «**Անկրկնելի Հալէպը**»(2023) կ'իյնան այս շրջագծին մէջ։

Ու հիմա՝ Յակոբ Միքայէլեանի «**Նոր Գիւղը**»։ Գիրքը տպուած է Երեւան, 2025-ին, Լուսակն հրատարակչատան կողմէ։ 176 էջ է ու լոյսին եկած է մեսրոպեան դասական ուղղագրութեամբ։ Մասնուէլ իմացանք, թէ գիրքին ծօնուած շնորհահաղդէս մըն ալ կայացած է Երեւանի Հ.Բ.Ը.Ս.-ի կեդրոնին մէջ, անցնող Յունիսի 6-ին։

Յակոբ Միքայէլեան աւելի քան տասը տարիէ իվեր հեռացած է Հալէպէն ու կայք հաստատած Երեւան, իրեն նման հազարաւոր հալէպահայերու նման։

Հալէպի հարազատ զաւակ է ան, հոն ծնած (1943-ին), հոն ուսանած, հոն ընտանիք կազմած, համրային-գրական-մշակութային-թատերական-կրթական երկարամեայ գործունէութիւն ունեցած՝ հոն։ Բեղուն արձակագիր է ան, երբեմնի մնայուն աշխատակից «**Զարթօնք**» օրաթերթի եւ «**Շիրակ**» ամսագրի, Հալէպի «**Գանձասար**» շաբաթաթերթի։ «Փինոքիօ» գրչետանով իր կիսաերգիծական ակնարկները,– որոնք յետոյ հատորի մը կողքին տակ մէկտեղուեցան (Անթիլիաս, 2004),– միշտ ալ ընթերցուել են հաճոյքով, զգացնելով մասնայատուկ բոյր մը։ Հայաստան հաստատուելէ ետք ալ Միքայէլեան իր մնայուն սիւնակը ունեցած է «**Ազգ**» լրագրին էջերուն։

«**Նոր Գիւղ**» հատորը կը պարփակէ մանկութեան եւ պատանութեան յուշեր, որոնք ուղղակի կ'առնչուին Հալէպի Նոր Գիւղ (արաբական անուանումով՝ Մէլտան) թաղամասին։ Նշմարեցինք սակայն, որ այստեղ ի մի բերուած գրութիւններէն ոմանք **երկրորդ անգամ ըլլալով է որ կը մտնեն կողքի մը տակ։** «Պանքան», «Արծիւները գետնի վրայ» եւ «Նոր-գիւղեան համանուագ» (թատերական պատկեր մը) խորագրեալ գրութիւնները (ընդամենը՝ շուրջ 80 էջ) արդէն տեղ գտած էին հեղինակին «Տիկնիկը» պատմուածքներու ժողովածուին մէջ (Հալէպ, 1998), շատ տարիներ առաջ։ Թէ ինչո՞ւ Միքայէլեան զանոնք անգամ մը եւս կը ներառէ իր նորատիպին մէջ՝ կ'անգիտանանք, մանաւանդ որ այս մասին տրուած է որեւէ բացատրութիւն, կատարուած չէ որեւէ ակնարկ։

Արդ, եթէ դուրս բերենք վերատպեալ այդ 80 էջերը, «**Նոր Գիւղ**»-ը կը վերածուի նուազ քան 100 էջանի նկուն հատորի մը, որ,– մեր համեստ կարծիքով,– ունէր հնարաւորութիւնը աւելի ճոխանալու եւ ընդլայնուելու։ Միքայէլեանի Հալէպի յիշատակները գեղուն են ու յորդկան, եւ հեղինակը երանի՜ աւելի լայն բանար իր կարկինը նոր-գիւղեան խճանակաւային հարթակին վրայ...։

Շուրջ քսան տարի Նոր Գիւղ ապրած ըլլալով Յ. Միքայէլեան ուզած է իր քաղցր ու տպաւորիչ յիշատակները բաժնել ընթերցողներուն հետ։ Ուստի, կրնանք ըսել անվաւրան, թէ այս գիրքը յուշագրութիւն է, եւ հոն տողանցող անձերը բոլորն ալ յիշատակուած են իրենց հարազատ անուն-մականունով։

Հեղինակին կեդրոնացումը, առաւելաբար, իր հօրենական տան վրայ է։ Ո՞վ էր իր գլթելունցի հայրը (երկաթուղային ընկերութեան երկարամեայ պաշտօնեայ, «Ժայռի պէս կոպիտ ու անտաշ, բայց բարի...», «աղքատ, բայց հպարտ»), ո՞վ էր իր մայրը («հեզահամբոյր կին մը չէր...», «մեր տան էրիկմարդը մայրս էր...»), որո՞նք էին չորս քոյրերը եւ այլն։ Պարբերաբար պատմած է ասոնց մասին, գրչի արագ հպումներով բնութագրած է զանոնք, չնոռնալով աւելցնել, թէ «**չորս քոյրերս ամուսնացած էին, ու մենք մնացած էինք երեքով։ Երբեք տարբեր աշխարհներ նոյն տանիքին տակ. ու կ'աշխատէինք ապրիլ ոչ-ճիշդ դասաւորուած համաստեղութեան մը մէջ**» (էջ 78)։ Հեղինակը չէ ծածկած իր կապուածութիւնը, համակրանքն ու մանաւանդ գուրջ՝ տարիներու աշխատանքին տակ կքած ու յոգնած հօրը նկատելով։ «**Կը դիտէի կաշի մնացած դէմքը, կնճիռներու խոր ակօսները, քուրայի պէս (արդեօք փքո՞ց ըսել կ'ուզէ – Լ.Շ.) ելելէնդ կուրծքը ու երկար ատեն աչքս չէի կրնար կտրել իրմէ**» (էջ 81)։

L. Շ.

(Շարունակութիւնը՝ մեր յաջորդ սիւնակով)



# ԶԻՍ Ո՛Վ ՄՈՌՅԱԲ ԱՅՍՏԵՂ

ԼԻԶԱ ԲԱՆՃԱՐՃԵԱՆ ԹԵԼԿԻԶԵԱՆ

Նստած էր աթոռակի մը վրայ եւ նայուածքը սեւեռած սեմեակին պատուհանէն դուրս: Արդէն հինգ տարի էր, որ այս սեմեակը դարձած էր իր տունը: Շաբաթներ, ամիսներ, տարիներ անցած էին, մինչ ինք պատուհանէն անդին ծռած ծառին շեղած ճիւղերը կը դիտէր: Անոնք ալ կարծես իրեն պէս հինցած էին, բայց տակաւին կանգուն: Արեւոտ ու պայծառ օր մըն էր, դուրսի խոտերն ու ծաղիկները մեղմ գեփիւռի մը զգուանքով կը շորորային: Իր հոգին, սակայն, մթազնած՝ կ'ապրէր խաւարի մէջ, առանց շողի ու ջերմութեան:

Ոչինչ ունէր ուրախանալու: Պարզապէս այս անարդար աշխարհը իրեն չարտած էր հիասթափութեան գիրկը. հիասթափութիւն, որ կամաց-կամաց կը սահի հոգիիդ մէջ, ինչպէս մառախուղը լեռան ծորին մէջ: Ի՞նչ-ի՞նչ անիրականա-ցած երազներ ունէր, որոնք փլուզուած էին: Ձիքն լքած էին ծերանոցի մը սեմեակներէն մէկուն մէջ: Ոչ մէկ այցելու ունէր: Երբ միւս տարեցներուն պարագաները այցելութեան գային, որչա՛փ կը տնջար, որ ինքն ալ «մէկ»-ը հիւրընկալէր... որ կիսէր իր վիշտերը, ամոքէր իր ցաւերը: Շատ ըսելիքներ ունէր, սակայն որո՞ւ պատմէր: Երանի՜ թէ մէկը ըսէր:



- Դամեստ, որեւէ բանի մը պէտք ունի՞ս...

Ո՛ր էին այն ամէները, որոնց համար իր երիտասարդութիւնը զոհած էր. անոնք մշտական երիտասա՛րդ պիտի մնային... օր մը իրենք ալ այցելուի մը կարիքը պիտի չունենայի՞ն:

Քիչ ետք, երկու անցորդներ խօսակցելով ուղղուեցան դէպի դիմացի ճամբան: —Ի՞նչ հաճելի է ազատութիւնը—, մտածեց Դամեստը: Ինք «բանտարկուած» էր չորս քառակուսի մեթր սեմեակի մը մէջ, ուր ժամանակը կարծես կանգ առած էր: Պահ մը նայեցաւ ժանգոտած պղինձի պէս կնճռոտ իր ձեռքերուն, որոնք տարիներու խոնջեմքը կը վկայէին: Դայելիին մէջ տեսաւ իր դալուկ եւ խորշոմած դէմքն ու արծաթե թելերով ծածկուած մազերը, որոնք շատ բան ունէին պատմելիք իր կեանքի ճանապարհին մասին:

Ապա նայեցաւ դէպի անցեալը, երբ երիտասարդ էր եւ կաշխատէր կարի գործատան մը մէջ, ապահովելով իր եւ մօրը օրապահիկը: Քոյրերը ընտանիք կրգնած էին, իսկ ինք կապ-րէր մօրը՝ տիկին Թագուհիին հետ: Այս վերջինը քմահաճ եւ իշխողական բնատրութեան տէր անձ մըն էր: Անոր վճռական ծայրը եւ խստաշունչ հայեացքը պարտադրել կու տային, որ Դամեստը կատարէ անոր բոլոր հրահանգները:

- Դամեստ, գաւաթ մը ջուր բեր:
- Դամեստ, սրճագոյն փէշս արդուկեցի՞ր:
- Դամեստ, պատշգամբ լուա՛...

Եւ անվերջ հրահանգներ...

Դամեստը, երբ գործէն տուն վերադառնար, անձնատուր կըլլար նաեւ մօրը քմահաճոյքներուն: Առաւել, երբ ամուսնա-ցած քոյրերը տեղ ունենային մեկնելիք, Դամեստին պարտա-որութիւնն էր անոնց գաւակներուն հոգ տանիլ: Ան սիրով «կը տանէր» այդ բոլորը: Սովորական օրերուն՝ պատմութիւններով եւ խաղերով կը զուարճացնէր իր զարմիկներն ու զարմուռի-ները, իսկ տօնական օրերուն՝ նուէրներով:

Տարիները թաւալեցան. Դամեստին մայրն ու քոյրերը հեռա-ցան այս աշխարհէն: Ջարմուռիներէն մաս մըն ալ ձգեցին Լիբանանը: Ինք տարեք եւ «անպէտք» դարձաւ: Այլեւս ոչ ոք հարցուց իր մասին, բացի ատենը մէյ մը «պարտադրուած» հեռաձայնէ մը: Ինքզինք գտաւ ծերանոցի մը սեմեակներէն մէկուն մէջ: Ամէն անգամ, երբ սեմեակին դուռը բացուէր, յոյս մը կ'արթննար իր մէջ, թէ արդեօ՞ք մէկը եկած է իրեն այցելելու: Երբ այդտեղի աշխատաւորներէն մէկը յայտնուէր, յոյսը՝ թառա-մած ծաղիկի մը պէս, մէկդի կը դրուէր: Այո՛, ապաստան ունէր, բայց հոգեպէս անապաստան էր...

Իր կեանքի վերջակէտը այսպէ՛ս պիտի ըլլար. ի՞նչ մնաց իրմէ հիմա... միայն յուշեր կիսատ ու թաց աչքեր: Լռութիւնը, որ նախապէս հանգիստ էր, դարձած էր ճնշում: Շուկէք, որ ազատութիւն էր, շղթայուած էր ներսէն: Ան իր կեանքի գիրքին էջերը շարուակաբար կը դարձնէր, հակառակ որ էջերը բարակցած էին ու մօտ՝ վերջաւորութեան:

Դամեստը կը դիտէր դուրսի ծառը, որ միայնակ էր իրեն պէս, բայց զարուհը նոր կեանք եւ թարմութիւն կը շնորհէր անոր. Իսկ ինք՝ տարուայ բոլոր եղանակներուն, սրտաբեկ՝ նաւու մը պէս կը տատանէր կեանքի պէկով ծոլուն վրայ:

Քանի մը ամիս առաջ, ես ու քոյրս որոշեցինք այցելել Դամեստին. ուշ էր սակայն... Դամեստն ալ հեռացաւ կեանքէն, իր համեստութիւնը ժառանգ ձգելով այս աշխարհին:

Այսօր մեր շուրջը կը տեսնենք անձեր, որոնք, հակառակ իրենց անշահախնդիր նուիրումին եւ ծառայասէր հոգիին, անխնամ եւ անտեսուած կը մնան, իբրեւ տարեցներ, իրենց իսկ հարազատներուն կողմէն: Յաճախ հարց կու տանք մենք մեզի, թէ արդեօ՞ք տարեք մը պէտք է ծերանոց տեղաւորուի կամ ոչ: Կրնանք ըսել, թէ պատասխանը կախեալ է անձի մը ընտանեկան, առողջական, մտային եւ տնտեսական պայման-ներէն: Իւրաքանչիւր որոշում ունի իր դրական եւ ժխտական անդրադարձերը: Ամէն պարագայ պէտք է առանձին գնա-հատուի՝ տարեցին առողջական, հոգեբանական եւ ամենական կարիքներուն համապատասխան: Կարգ մը տարեցներու համար ծերանոցը կրնայ հոգատար միջավայր մը ըլլալ, ուրիշ-ներու՝ զգացական հաւատարակշիւթեան եւ ապրելու իմաստի կորուստ, մասնաւոր երբ հեռու են իրենց ընտանեկան ջերմ շրջանակէն: Ըստ իս՝ ծերանոց տեղաւորելը պէտք է ըլլայ վերջին տարբերակը, երբ տարեցը ունի առողջական եւ հոգե-բանական այնպիսի կարիքներ, որոնք մասնագիտական խնամքի կը կարօտին: Նոյնպէս նախընտրելի է, որ տարեց անձը, եթէ ատակ է, ներգաւառի որոշման մէջ եւ իր արժանա-պատիւ կեանքը առաջնահերթ նկատուի:

# ՀՈԳԵԻՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄ ՄԸ.

## ԱԲԵՏԱՐԱՆԵԼՈՒ ՓՈԽԱՐԷՆ ԱՆԻԾԵՂ - ԵՐԲ ԲԱՀԱՆԱՆԵՐ ԿԸ ԶԱԽՈՂԻՆ ԻՐԵՆՑ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ (ԺՂՆԵ)

նութիւնն է, որ իր շուրջըլորը միայն մահ ու ակեր կը սփռէ: Արդարեւ, Յովհաննու աւետարանէն քաղուած վերոնշեալ մէջբերումը իշխանութիւն զաթելու արտօնագիր չէ, այլ միանշանակ հոգեւոր պաշտօնի արտայայտութիւն: Քրիստոս այստեղ մարդկային իշխանութեան մասին չի խօսիր, այլ առաքելներուն կը վստահի հոգեւոր-բարոյական հեղինա-կութիւն մը՝ եկեղեցական կեանքի շրջանակներու մէջ հաշ-տութիւն ստեղծելու առաքելութեամբ: Ուժ ունենալը ուժ գործադրել չի նշանակեր, այլ անձնուէր եւ սիրայօժար ծառայել՝ Քրիստոսի հաւատքին մէջ միութիւն, խաղաղութիւն եւ ներդաշնակութիւն ստեղծելու նպատակով:

Քահանան ի պաշտօնէ կը գործէ Քրիստոսի անունով, ոչ թէ սեփական նախաձեռնութեամբ: Ամէն ոք, որ իր անձին բացար-ծակ իշխանութիւն կը վերագրէ՝ կը չարափոխէ օծումի միջոցով իրեն տրուած հեղինակութեան բնոյթը: Աստուածատուր այդ հեղինակութիւնը շնորհի է եւ ոչ՝ ստացուածք, տիրոյթ կամ աւար: Քահանան չէ, որ «կը տնօրինէ», այլ Քրիստոս է, որ կը ներէ իր պարգեւած շնորհներով, նաեւ միայն Ան է, որ կը դատէ իր երկրորդ գալուստով եւ սահմանած Վերջին դատաստանով: Մնացած ամէն ինչ սխալ մեկնաբանութիւն է եւ հոգեւոր ամբարտաւանութիւն:

Ամէնքը օրինութեան հակամիջն է, եւ հետեւեալա՛ր՝ ան կը ներկայացնէ եկեղեցականի մը չարաղէմ միւս երեսը: Օրինու-թիւնը հետեւանքն է սիրոյ, իսկ անէնքը՝ մեղքի եւ ատելութեան: Անձ մը անիծել՝ կը նշանակէ ինքն իրեն ակելի բարձր դասել քան Աստուծոյ դատաստանը՝ դարձնելով աստուածային շնորհը մարդկային վրիժառութեան եւ հատուցման միջոցի: Նման արարք մը ոչ միայն աստուածաբանական մօտեցումով անհիմն է, այլեւ բարոյապէս դատապարտելի: Սոյնը ամբողջութեամբ խոտոր է Աւետարանի ոգիին, որ ներողա-մտութիւնը քրիստոնէական բարոյախօսութեան գերագանց առաքինութիւններէն մին կը հռչակէ՝ կոչ ուղղելով նոյնիսկ սիրելու թշնամին (Մտ. Ե, 44) եւ ոչ թէ դատապարտելու:

Եթէ ժամասաց եկեղեցականներ գէթ պահ մը ըմբռնէին անէմօթեայ ժամերգութիւններուն առթիւ կրկնուող Ներսէս Շնորհալի հայրապետին հոգեբուխ խօսքերուն իմաստը՝ «Արդարութեամբ մի՛ դատեսցես, այլ գթութեամբ Քով քաւես-ցես» («Մի՛ դատեր մեզ արդարութեամբ, այլ քաւ մեզ Քու գթութեամբ»), ապա դժուար թէ տղայական վարքագիծ ցուցաբերելով սանձազերծէին իրենց բերանը՝ դառնալով «պապէ ակելի պապական», «թթու քան գինիէն դարձած քացախը», «վերամբարձ ոտնահարութեամբ [...] յաջ եւ յահ-եակ խոտորելով, զառաջնոցն մեղանշելով, եւ վերջոցն չար նշաւակ գոլով» անէնք կարդալու իրենց հակառակորդներուն դէմ:

Ի դէպ, պէտք է նաեւ յիշեցնել, որ իւրաքանչիւր հոգեւո-րական սուրբ պատարագի արարողութիւնը սկսելէ առաջ պարտադիր կարգով սուրբ խորհրդին առջեւ ծնրադիր կ'ար-տասանէ Դայց. առաք. եկեղեցւոյ ժամագիրքերուն ամենա-սկիզբը նշուած «Դրածարիմք»-ը, անմիջապէս ասոր յաջորդող «Խոստովանիմք եւ հաւատամք» աղօթքները, ապա Ամենա-սուրբ երրորդութեան ուղղուած իր խորագգած «Ձղջում»-ը: Սոյնը հերթաբար կը յիշէ մարդկային մարմնական, մտային ու հոգեկան բազմաթիւ մեղանշումներու շարք մը, որոնց մէջ մասնաւորաբար նաեւ կը կարեւորուին հետեւեալ ծանրակշիռ մեղքերը.

«Մեղանշեցի լեզուիս չարաբանութեամբ՝ ստախօսու-թեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակա-ճառութեամբ, վիճաբանութեամբ, չարախօսութեամբ, շոգմոգութեամբ, քսութեամբ, դատարկաբանութեամբ եւ ծաղրով, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ, **անիծելով**, տրտմջալով, դժգոհելով, բամբասելով եւ հայիոյելով. մեղա՛յ Աստուծոյ»:

Երանի պատարագիչ քահանայ հայրերը ըմբռնէին եւ իրա-պէս անդրադառնային այն լրջագոյն խօսքերուն, որոնք լոկ իրենց բերնէն կը ծորին, սակայն առանց ներթափանցելու իրենց սիրտը եւ յառաջանցելու հոն դարձի, ապաշխարութեան եւ ի լոյս աստուածգիտութեան արեւելումի ճշմարիտ զգացում մը:

Եկեղեցին երբեք պէտք չէ դառնայ յիշոցի, անէնքի ու նզովքի վայր մը, այլ միշտ պէտք է մնայ ողորմութեան ապաստան մը՝ կանգնած ըլլալով իր հոգեւոր-բարոյական, սրբացնող ու սրբագործող բարձրութեան վրայ:

Պէտք չէ հեղինակութիւնը վստահիլ մարդոց, որոնք ատակ չեն գայն կրելու: Այլապէս, եթէ երբեք անոնք ունենային կարելիութիւնը,— ինչպէս միջին դարերուն,— հազարաւորներ հաւատաքննութեան կ'ենթարկէին ու խարոյկի անհամար թէգեր կազմելով կը հրկիզէին գանոնք: Իսկ զաւեշտալին այն է, որ անոնք այս ոճիւրը կը գործէին խղճի ամենայն հանդար-տութեամբ՝ Յիսուսի սիրոյն եւ Աստուծոյ անունով:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | [www.araraddaily.com](http://www.araraddaily.com)  
email: [araradoratert@gmail.com](mailto:araradoratert@gmail.com)

ارارات جريدة سبائية يومية أرمينية  
تصدر عن شركة سبائيس الملاقة والشرق (ش.م.م.)

[www.araraddaily.com](http://www.araraddaily.com)

Սալցպուրկի կրկնամկրտականներու (Anabaptist) հրկիզումը 1958թ.

Եկեղեցին կոչուած է աշխարհի եւ ընդհանրապէս մարդ-կային հասարակութեան մէջ ըլլալու «աղ երկրի» եւ «լոյս աշ-խարհի» (Մտ. Ե, 13-14), բայց ոչ քաղաքական իշխանութիւն ձեռք բերելու կամ դառնալու անձնական վրդովմունքի գործիք: Երբ եկեղեցական մը հրապարակաւ անէնք կը կարդայ կամ մարդիկ կը նզովէ առանց կանոնական, օրինական ընթացա-կարգի կամ յստակ բարոյական եւ աստուածաբանական պատճառի, ան ոչ միայն կը չարաշահէ հոգեւոր իշխանութիւնը, այլեւ լուրջ վիրաւորանք կը հասցնէ եկեղեցւոյ առաքե-լութեան: Ստոյգ է, որ եկեղեցին ունի հոգեւոր պարտակա-նութիւն մը բարոյապէս ուղեկցելու ընկերային-հասարակակաւն կեանքի զարգացումներուն, սակայն սոյնը իրեն չ'արտօներ խճճուելու կուսակցական-քաղաքական հակամարտութիւն-ներու մէջ: Այս իմաստով՝ յատկապէս եկեղեցականները մաս-նաւոր առաքելութիւն մը ունին Ս. Դոգիէն իրենց շնորհուած եօթնարփեայ առաքինութիւններով, այսինքն՝ իմաստութեամբ, գիտութեամբ, զօրութեամբ, իմացութեամբ, խորհուրդով, աստուածապաշտութեամբ եւ երկիւղով ցուցաբերելու հովուա-կան վերաբերում անխտիր բոլոր մարդոց, բայց մասնա-ւորաբար իրենց հօտին նկատմամբ:

Ամէնքի ու նզովքի չաստուածաբանութիւնը կը հակասէ Աւետարանի վարդապետութեան, որ յատկապէս եկեղեցական-ներուն կը պատգամէ Բանին կենաց քարոզութեամբ իրագոր-ծելու խաղաղասիրութեան, հաշտութեան, երկխօսութեան, ճշմարտութեան, նաեւ՝ առաւելապէս ներողամտութեան ու սիրոյ ոգին: Դետեւաբար, թէ՛ եկեղեցւոյ, թէ՛ քաղաքացիական հայեցակէտերէ առաջնորդուելով անհրաժեշտ է վճռականօրէն մերժել նման գործելաժող ու չարաղէտ վարքագիծ մը:

Անիծելն ու նզովելը հոգեւոր իշխանութեան ամենաայլան-դակ չարաշահումն է՝ անհերքելի ապացոյց մը եկեղեցականի բարոյական սնմանութեան եւ տկարութեան:

Եկեղեցին դատական ատեան մը չէ եւ ոչ ալ անոր սուրբ խորանը՝ մահաւճիւր արձակելու չարագոյժ ամպիւռն մը: Ի վերջոյ, անէնքը հոգեւոր իմաստով մահաւճիւր մըն է, որ կը միտի չարիք հասցնելու այն անձին, որուն ուղղուած է այդ անէնքը: Միմիջեւ եկեղեցիին առաքելութիւնը մարդոց մէջ եւ մարդոց միջեւ Աստուծոյ օրինաբեր ներկայութեան մասին արժանահաւատ վկայութիւն տալն է, անոնց հոգիներուն առջեւ դրախտի եւ ոչ թէ դժոխքի դռները բանալը:

Որո՞ւն է պէտք եկեղեցին, երբ իր սուրբ եւ մեղսաքաւիչ խորանը կը վրդաւած մաքստանական բօթաբեր ատեանի մը՝ իր շուրջըլորը ստեղծելով վախի ու սարսափի, դժբախ-տութեան, արհաւիրքի, ընկճուածութեան, հոգեկան հիւանդա-գին բարդոյթներու ու ծախարդութեան միջավայր մը:

Այն եկեղեցականը, որ ցարդ չէ սորված խաչին վրայ Յիսուսի արտասանած «Դար, թող դոցա, զի ոչ գիտեն գինչ գործեն» («Դար, ճերձ՝ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն») (Ղկ. ԻԳ, 34), քրիստոնէական բարոյախօսութենէն եւ ներողամտութեան ոգիէն ոչինչ հասկցած է. ուստի ան միան-գամայն սխալ ասպարեզ մը ընտրած է: Իրեն դիրք, առօրեան կամ պաշտօն զբաղեցնելու տեղը չէ եկեղեցին: Պագեւոր կոչումը արհեստ մը չէ, այլ՝ անձնուէր առաքելութիւն:

Ամէ՞ծք, որո՞ւ անունով: Պէտք չէ մոռնալ, որ անտեղի նախանձայուզութիւնը ծանրակշիռ մեղանշում մըն է քրիստո-նէական պատգամին դէմ. «Մի՛ դատէք, որ չդատուիք, որովհե-տեւ ինչ դատաստանով որ դատէք, անով պիտի դատուիք» (Մտ. Ե, 1-2): Ինչ խօսք Ոսկէ օրէնքին մասին, որ Յիսուսի Լեռան քարոզին եւ ընդհանրապէս քրիստոնէութեան կուռ տրամա-բանութիւնը կ'արտացոլացնէ. «Ամէն ինչ, որ կ'ուզէք մարդիկ ընեն ձեզի, այդպէս ալ դուք ըրէք անոնց, որովհետեւ այդ իսկ են Օրէնքն ու Մարգարէները» (Մտ. Ե, 12):

Անիծողը ինքն իրեն իրաւունք կը վերապահէ անիծելու՝ հիմնուելով աւետարանական հետեւեալ խօսքերուն վրայ՝ «Եթէ մէկու մը մեղքերը ներէք՝ ներուած պիտի ըլլայ անոնց, եթէ մէկու մը մեղքերը կապէք՝ կապուած պիտի ըլլայ» (Յովհ. Ի. 23):

Կրօնին ամենավտանգաւոր դարձերեսը սխալ մեկնաբա-



# ԴԵՌ ԿԸ ԾՆՁԷ ՀԱԼԷՊԸ (7)

Հայկա կ'ուղղուէի, շրջանի Ա.Դ.Յ.Կ.-ի մորանշանակ Վարիչ մարմինի ընկերներուն հրաւերով, 15 Յուլիսին Կաթողիկէ Զուարթնոց եկեղեցւոյ «Աղաճանեան» սրահին մէջ հնչակեան 20-ներու նահատակութեան 110-ամեակի հանդիսութեան որպէս պատգամախօս: Հայկաի ընկերներուն հրաւերին ընդառաջած էի առանց երկմտանքի: Սակայն մինչեւ մեկնումի օրը աջէն ու ձախէն բազմաթիւ խորհուրդներ լսեցի թէ՛ կատարածս լուրջ քայլ մը չէ, մեծ ռիսք մը կ'ընէի, թէ ինչե՛ր կը պատմուի հոնտեղի կացութենէն, տակաւին երէկ եկեղեցի մը ականահարեր են, հապա եթէ այսպէս ըլլայ... այնպէս ըլլայ... եւ այլն, եւ այլն: Պատասխանս երկու բան էր. վերջին շրջանին իմ ստացած տեղեկութիւններս ձեր պատմած յոռետես պատկերը չունի, ընդհակառակը այժմ Լիբանան ալ աւելի անապահով դարձած է եւ միթէ Հայկա հասնիլը Արարատի գագաթ բարձրանալէն աւելի դժուա՛ր կը տեսնէք:



Այս խորհրդածութիւնները մտքիս՝ մտանք սուրիական անցագրային սրահ:  
- Արդեօք քանի մը «սուրիական» պէ՛տք է պատրաստենք», կը հարցնեմ վարորդին:  
= Ինչո՞ւ սխալ բան մը ըրիմք, կը պատասխանէ ան:  
- Բայց առաջ ալ սխալ չէիմք ընէր, կ'ըսէմ:  
= Ատիկա առաջ էր, կ'ըլլայ պատասխանը:

Հրա՛շք: Կոկուած սրահը՝ օդօրակիչով զովացուած: Հրմշտուլքը որ անցեալին պարտադիր «օրինականութիւն» էր մանաւանդ այժս սրահէն ներս, հիմա կորուած է: Ամէն ոք կարգի կեցած համբերութեամբ իր հերթը կը սպասէ: Ապակիէն անդին, համակարգիչներու դիմաց մօրուքաւոր պաշտօնեաներ են: Ազնիւ ժպիտով մը «Սապահ ըլ խէյր հօրեղբայր» ողջունեց անոնցմէ մին, որուն երկարած էի իմ անցագիրս: Երազ է՞ր արդեօք: Ստուգելէ եւ կնքելէ ետք վերադարձուց նոյն ժպիտով ու «բարի եկար, Աստուած հետդ ըլլայ»ով:

Դուրսը ականատես եղայ այլ հրաշքի մը: Երկու երիտասարդներ կը փորձէին անուշեղէն հիւրասիրել երթեկութեան օրինականութիւնը հսկող մօրուքաւոր պահակ-պաշտօնեային: Վերջինս կտրուկ կը մերժէր եւ այդպէս ալ հրաժարեցաւ առաջարկուած հիւրասիրութենէն՝ «չեմ առնէր, անկարելի է» ըսելով:

Ճամպրուկներու քննութիւնն ալ ակարտեցաւ խորհրդանշական զննունով միշտ յարգալից, անկաշառ ու ազնիւ վարմունքով:

Սահմանէն մինչեւ Հայկա երկարող 260 քիլոմէթրի երկայնքին անցարգելներ կային: Յատկապէս գլխաւոր քաղաքներու մուտքին ու ելքին: Նախագահի նկար եւ ձեւական լոգունգները անհետացած էին: Գրեթէ նոյն՝ նախորդ իշխանութեան տեղակայած անցարգելներն էին: Տարբերութիւնը սակայն, որ բոլոր պահակներն ալ մօրուք ունէին, ծածկուած երեսներով: Մօտաւորապէս 8-10 «հաճիգ»ներէն ոչ մէկը կանգնեցուց մեր ինքնաշարժը, կամ անցագիր հարցուց, հրամայեց որ աջ կողմ կենանք ու ճամպրուկները բանանք, քանի մը դահեկան կաշառք տանք եւ այլն: Ինքնաշարժը երբ դանդաղօրէն մօտենար պահակակէտին, վարորդը մեքենան անշարժացնելու վերջին արգելակումը դէռ չկատարած, պահակ-զինեալը ձեռքի ազնիւ շարժումով նշան կ'ընէր ճամբան շարունակելու, անխուսափելի «ալլա մնաքօն»ին հետ: Այո՛, անոնցմէ մաս մը արաբի տեսք չունէր, սակայն բոլորն ալ միշտ քաղաքավար էին:

Ճամբու երկայնքին եւ ամէն տեղ եւ ամէն ոք վառելանիւթի վաճառքի զբաղումի մէջ էր: Մեծ ու փոքր «կալոն»ներ, տեսակաւոր գոյնզգոյն պենզին ցուցադրուած է ճամբուն եզերքը, կիզիչ արեւուն տակ: Ինքնաշարժներու վառելանիւթի գոյներէն երկու տեսակին ծանօթ էի, սակայն առաջին անգամ ըլլալով ականատես եղայ ծիածանի բոլոր գոյներով «պենզին»ներու՝ կարմիր, մարմնագոյն, բաց-մարմնագոյն, դեղին, կանաչ, դեղնականաչաւուն, գոգ կապոյտ, բաց կապոյտ եւ այլն:

Ծովեզերեայ սահմանէ մինչեւ Զոմ մայրուղին կ'անցնի լիբանանեան սահմանին հարեւանութեամբ՝ գրեթէ կպած: Մարդոց եւ ինքնաշարժներու խումբ մը հեռուէն հարսանիքի տպաւորութիւնը կը ձգէին: Բացատրուեցաւ, որ անոնք դէպի Լիբանան անօրէն մտնողներն են: Իրապէս ալ, երբ մօտեցանք նշմարեցինք հեռուն՝ անջողի տարածքներուն վրայ դէպի

## Շարունակուած էջ 1-էն

զառիթափ բարձրացող խումբ մը, որոնք Մեքսիքոյէն Միացեալ Նահանգներ անցնելու տպաւորութիւնը կու տային: Իմացայ նաեւ, որ ասոնք առաւօտեան կը մտնեն եւ յետմիջօրէին ալ կը վերադառնան: Բացատրութիւններէն շատ բան խելքիս չմտաւ, սակայն միակ բանը որ հաստատեցի այն էր, որ սահմանային հսկողութիւնը միայն ինծի նման օրինապահ մարդոց համար էր:

Մայրուղիին երկու կողմերը մեզի անդադար ուղեկից մնացին մարդոց կողմէ նետուած աղբերը: Ծխախոտի տուփեր, պարապ կամ աղբով լեցուն տոպրակներ, թուղթի եւ պտուղի մնացորդներ: Անոնց մեծ մասը տարածուած էր ճամբէն դէպի վար երկարող հողատարածքներուն վրայ: Ճամբորդութեան ընթացքին քանի մը անգամ ականատես կ'ըլլայինք փոքր «վան»երուն պատուհաններէն դուրս շարտուող առարկաներու: Ի դէպ աղբակոյտերու «հիւանդութեամբ» կը տառապէր նաեւ Հայկա քաղաքը: Նախորդ շրջանին քաղաքը համեմատաբար աւելի մաքուր էր:

Ճամբու եզերքին տեղ-տեղ ռազմական մեքենայի մը «անընչացած» կմախքները մօտիկ անցեալի պատերազմին ձեռագիրը կը յուշէին: Արեւմտեան ֆիլմերը յիշեցնող տեսարաններուն վրայ, սակայն, միմիայն ծանր երկաթի կոյտերը մնացած են, անոնք ալ՝ քարերու վրայ՝ անհիւները հանելու համար: Յափշտակուած է ինչ որ հնարաւոր էր տեղափոխել:

Հոմս չհասած, հետիոտն անցումի մը ամբողջ երկայնքին մօտ 25 մեթրի վրայ, «բարի գալուստի» պատառ մը նշանրեցի: Արաբերէն գրութեան տակ սովորական անգլերէն թարգմանութիւնը փոխարինուած էր թրքերէն ողջոյնի մաղթանքներով: Աւա՛ղ որ ուշ անդադառնալով՝ նկարելու հնարաւորութենէն զրկուեցայ:



Հայկա հասանք շատ հանգիստ: Կապուեցանք ընկերներուն հետ, որոնք անմիջապէս շրջապատեցին զիս ու շաբաթ մը աւելի գուրգուրալից հիւրամեծարութիւն ցուցաբերեցին: Որպէս առաջին տպաւորութիւն՝ ինքնաշարժներու քանակն ու չափը աւելցած էր, անտանելի խճողումներ «պարզելով» մեղ փողոցներով ճնշուած քաղաքին: Կը կարծէի, որ աշխարհի ամենաճկուն վարորդները լիբանանցիներն են: Սակայն մեղիկ փողոցներուն մէջ առանց իրար քսուելու ինքնաշարժ վարելը հալէպցիներուն տրուած է եղէր...: Օտարներու թիւն ալ բազմապատկուած տեսայ յատկապէս «հայապատկան» շրջաններուն մէջ: Ցաւալի իրողութիւններէն էր համատարած գողութեան դէպքերը, որոնց առաջըր առնելու հնարաւորութիւնները առայժմ կը պակսին, ըստ երեւոյթի:

Քսաններու ոգեկոչման համդիսութեան ընթացքին քայլերգները զանց առնուած էին (առայժմ սուրիական քայլերգի չգոյութեան պատճառով), իսկ ելոյթ ունեցողներէն ոչ մէկը ներկայ իշխանութեան ոչ պարագլուխին անունը արտասանեց, ոչ ալ նահանգապետին կամ բարձրաստիճան անձին: Բացման խօսքը արտասանուեցաւ միայն հայերէնով, Քսաններու մասին ազատօրէն արտայայտուեցանք, քննադատեցինք բշմամիին վարքագիծը, Ն.Ա.Մ.Մ.-ի «Ղօղանջ» երգչախումբը ելոյթ ունեցաւ հայրենասիրական ազատագրական երգերով, երգիչները կուսակցական երգերով խանդավառեցին երիտասարդութիւնը, իսկ երեք համայնքապետներ ալ անկաշկանդօրէն իրենց սրտի խօսքը յղեցին եւ միասնական աղօթքով եզրափակեցին ձեռնարկը: Ոմանց համար հրաշքի համագօր բան մըն է ափիկա, ուրիշներ վերապահութեամբ կը դիտեն այս նոր վիճակը, յատկապէս հարաւային եւ ծովեզերեայ շրջաններէն երբեմն հասած անախորժ լուրերուն պատճառով:

Ընդհանուրին մօտ նկատելի էր մօտիկ անցեալին տիրող վարչակարգի սխալներուն հանդէպ սաստիկ զայրոյթը եւ զգուշաւոր հաւատք՝ ներկայ իշխանութեանց վարած քաղաքականութեան հանդէպ: Հայկապահայութիւնը այսօր կը շնչէ վայելելով հոգեւոր, մտաւոր, ընկերային անսահմանափակ ազատութիւն: Մաղթենք, որ երկիրը ապաքինուի պատերազմի հետեւանքերէն եւ այս գոյավիճակը ոչ միայն մնայ, այլ անեւ ամրապնդուի, դառնայ հաստատուն եւ մնայուն:

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

15 Յուլիս 2025: Տարուան 196-րդ օրն է:  
2025-ի աւարտին կը մնայ 169 օր:

## Դէպքեր-սուներ

**1795 – «Մարսելեզը» կը հռչակուի Ֆրանսայի ազգային օրհներգը**, ստանալով պաշտօնական կարգավիճակ Ֆրանսական յեղափոխութեան ընթացքին:

**1958 – Նախագահ Ալգենհաուեր** ամերիկեան գօրքեր կը դրկէ Լիբանան տարածաշրջանի անկայունութեան պատճառով: Զօրքերը հոն կը մնան 3 ամիս:

**1961 – Սպանիա** պաշտօնական կերպով կը ճանչնայ **կանանց եւ տղամարդոց իրաւահասարութիւնը**:

**1974 – Կիպրոսի մէջ զինուորական յեղաշրջում**, որուն ընթացքին նախագահ **Մակարիոս** կը ստիպուի փախուստ տալ:

**1983 – Փարիզի Օրլի օդանաւակայանի մէջ ԱՄՍԼԱ-ի կողմէ կազմակերպուած գործողութեան** մը ընթացքին սպաննուեցան 8 եւ վիրաւորուեցան 55 անձեր: Նպատակը թրքական օդանաւ մը թիրախաւորելն էր:

**2006 – Կը հիմնադրուի Թուիթթըր հարթակը**, որ հետագային պիտի դառնար համաշխարհային հաղորդակցութեան կարեւոր միջոց:

**Պոթուլանա – Նախագահի օր**, որ կը նշուի իբրեւ պետական խորհրդանշական տօն:

**Պրունէյ – Սուլթանի օր**, նուիրուած պետութեան բարձրագոյն ղեկավարին:

## Ծնունդներ

**1872 - Արշակ Զոպանեան (1872-1954)** – արեւմտահայ գրող, բանասէր, թարգմանիչ եւ գրաքննադատ: Հրատարակած է «Ծաղիկ» հանդէսը, ապա հաստատուած է Փարիզ՝ փախչելով համիտեան արհաւիրքէն:

**1606 - Ռեմարանտ վան Ռէյն (1606-1669)** – նշանաւոր հոլանտացի վարպետ գեղանկարիչ, լուսանկարչութեան նախահայրերէն:

**1949 - Մոհամմատ Խալն Ռաշիտ Ալ Մաքթում** – ՄԱԿ-ի փոխնախագահն ու վարչապետն է, նաեւ՝ Տուպայի Էմիրութեան կառավարիչը:

**1898 - Վարսենիկ Աղասեան (1898-1974)** – արեւմտահայ բանաստեղծուհի, արձակագիր եւ թատերագիր: Գրած է բնական գործեր, պատմուածքներ եւ բանաստեղծութիւններ՝ յաճախ կանանց հոգեբանութեան նուիրուած:

**1909 - Վալթեր Արամեան (1909-1994)** – նշանաւոր արձակագիր եւ թարգմանիչ:

**1911 - Աղաւնի (1911-1992)** – (Աղաւնի Արշակի Գրի-գորեան), հայ բանաստեղծուհի եւ թարգմանչուհի:

**1940 - Մկրտիչ Սիմասեան** – հայ ծարտարապետ:

**1973 - Ճօն Տոլմայեան** – ամերիկահայ երաժիշտ, System of a Down ռոք խումբի թմբկահար:

## Մահեր



**1904 - Անթոն Զեխով (1860-1904)** – ռուս գրող, պատմուածքագիր ու թատերագիր:

**1979 - Խուանա տէ Իփարայուրու (1892 - 1979)** – ուրուկուլեյցի բանաստեղծուհի:


**1977 - Կոնստանտին Ֆետին (1892-1977)** – ռուս խորհրդային գրող եւ հրապարակագիր: Եղած է ԽՍՀՄ գրողներու միութեան նախագահ:

**2011 - Տոնարա Մկրտչեան (1941-2011)** – հայ թատերական ու ֆիլմի նշանաւոր դերասանուհի: Միւր Մկրտչեանի տիկինը եղած է, սակայն իր անմահական ողբերգութիւններով ապրած եւ մեկուսացած Սեւանի հոգեբուժարանին մէջ:

**2020 - Ժիրայր Թաթուլ Ալթունեան (1946-2020)** – յայտնի խմբավար, երգիչ-պարի համոյթի գեղարուեստական ղեկավար, Թաթուլ Ալթունեանի որդին:



# ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



**Պէյրուք** (արեւոտ)  
Ցերեկը 29/25՝ գիշերը՝ 65% տամուկ

**Երեւան** (արեւոտ)  
Ցերեկը 34/20՝ գիշերը՝ 19% տամուկ

**Հայկա** (արեւոտ)  
Ցերեկը 34/24՝ գիշերը՝ 43% տամուկ

**Դամասկոս** (արեւոտ)  
Ցերեկը 36/18՝ գիշերը՝ 15% տամուկ

**Տուպայ** (արեւոտ)  
Ցերեկը 41/34՝ գիշերը՝ 40% տամուկ

**Լոս Անճելըս** (արեւոտ)  
Ցերեկը 26/17՝ գիշերը՝ 61% տամուկ

**Սիտնի** – վաղը (արեւոտ)  
Ցերեկը 17/6՝ գիշերը՝ 46% տամուկ

**Մոնթելիստո** – վաղը (թեթեւ անձրեւ)  
Ցերեկը 13/8՝ գիշերը՝ 96% տամուկ

# ԶԵԻՎՓՈԽԵՆՔ ԿԵԱՆՔ ՄԸ ՏԱՐԵԿԱՆ 100 ՏՈԼԱՐՈՎ



Տարեկան ընդամենը 100 տոլարով դուք կրնաք կրթաթոշակի հովանաւոր ըլլալ եւ օգնել աշակերտի մը ստանալու որակեալ կրթութիւն, կտրելու աղքատութեան շրջան եւ կերտելու աւելի պայծառ ապագայ մը:

Բայց սա միակ միջոցը չէ տարբերութիւն ստեղծելու համար:  
\* Մենք ստեղծած ենք նուիրատուներու յատուկ գրքոյկ, որ կը ներկայացնէ մեր դպրոցին աջակցելու բազմաթիւ ազդեցիկ ձեւեր.

- Հովանաւորել կրթաթոշակներ
- Ստեղծել արհեստագիտութեան սեմեակ
- Աջակցիլ դպրոցի ենթակառուցուածքային նախագիծերուն
- Բարելաւել ուսումնական տարածքներ
- Առաջարկել ուսուցիչներու զարգացման ծրագրեր

Իւրաքանչիւր ներդրում՝ մեծ թէ փոքր, կը ստեղծէ իսկական փոփոխութիւն:  
Անկախ անկէ, թէ դուք մէկանգամեայ կամ ամենամեայ նուիրատուութիւն կը կատարէք Սահակեան-Լեւոն Մկրտիչեան գոլէֆին, դուք ներդրում կը կատարէք ապագայ կերտելու եւ կեանքեր ձեւափոխելու մէջ:  
Յանելալ մանրամասնութեանց համար կապ հաստատել մեզի հետ...  
Եկէք միասին կառուցենք աւելի լաւ վաղուան օրը: